

# ԲԻԶՆԵՍ ԱՄԱԳԻՐ Business Class

ԱՆԴՐԱՆԻԿ  
ԳՐԻԳՈՐՅԱՆ  
«ՍԵԼԵՆԱ ՍԵՐՎԻՍԻՑ»  
ՄԻՆՉԵՎ THE CLUB

ՄԻԽԱՅԻԼ  
ԽՈՂՈՐԿՈՎԱԿԻ  
ՆԱՎԱՅԻՆ ԱՐՔԱՅԱՋՆԸ,  
ՈՐ ԱՅԴՈՒՄ ԷԼ  
ԱՐՔԱ ԶԴԱՐՁԱԿ

TOP 100  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՇՈՐ  
ՀԱՐԿԱԴՐՈՒՆԵՐԸ

ԻՆՉՊԵՍ ԶԱՓԵԼ  
ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՍ-Ի ԳԱԱՑՔԸ ԱՐԴԵՆ  
ԳԱԱՑԵԼ Է



## ԶՐԱԴՈԼԱՐՄԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԸ

ԾԱՌԱՋՎԱՅ ԶՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ «ԾԱՂԿՈՒՄ Է»

մասը՝ որոշակի այլ կրեդիտներ ստանալու համար նախատեսված դասընթացները: Բացի դրանից՝ այսօր լայն տարածում է ստացել կրթական ռեսուրսների բացահայտ տրամադրումն ամբողջ աշխարհին: Այս մոդելը կոչվում է OpenCourseWare և տրամադրվում է այնպիսի բարձրանուն համալսարանների կողմից, ինչպիսիք են Ֆերկլիի համալսարանը, Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտը, Յելլի համալսարանը

## Ըստ գնահատականների՝ այս տարի առցանց կրթության համաշխարհային շուկայի եկամուտները կիասնեն **52.6** մլրդ դոլարի:

և այլն: OpenCourseWare-ը առաջարկում է մոտ 4 200 անվճար ամփոփ դասընթացներ, որոնցից 1 689-ը միայն իրականացվում է Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի կողմից: Սակայն հարկ է նշել նաև, որ այս տեսակի ծրագրերը չեն ապահովում դիպլոմների կամ որևէ աստիճանների, կրեդիտների ստացում, դրանք ուղղված են միայն ինքնուսուցման կատարելագործմանը, մատակարարում են համալսարանում գործող դասախոսությունները, տեսագրությունները, լաբորատոր աշխատանքները, քննությունները և այլն: Եվ չնայած դրա կազմակերպումը պահանջում է մեծ ներդրումներ, որը մեկ դասընթացի մասով կազմում է մոտ 10-15 000 դոլար, այս ծրագրերը սկսում են թափ առնել և գտնում են իրենց հովանավորներին: Ըստ որում՝ բոլոր ծրագրերը լիցենզավագական են և մանրամասնորեն մշակվում են:

Ինտերնետային ուսումն այսօր խոստանում է զարգացման հետաքր


րաշարժ միտումներ: Հաշվի առնելով որորտի միջազգայինացումը՝ կրթական մանր օպերատորների թիվը, ըստ գնահատականների, գնալով կնվազի, և դաշտում կմնան միայն նրանք, ովքեր կվարողանան գրավել առավել ընդարձակ սեզմնետներ: Սակայն կիմեն նաև կազմակերպություններ, որոնք, չցանկանալով երկրորդ անգամ ամիս հայտնագործել, պարզապես շատ արագ կվազմակերպվեն, կօգտվեն ինտերնետում առկա ռեսուրսներից և կառաջարկեն ավելի ցածր գներ: Նշենք, որ այսպիսի ծառայություններ ինտերնետում ևս լայնորեն առաջարկվում են: Օրինակ՝ «Մուլլ» դասընթացների կառավարման համակարգը բաց ռեսուրսների համակարգ է, որը կարող է օգտակար լինել առցանց դասընթացներ անցկացնող դասախոսների համար: Սրա օգնությամբ շատերը կարող են ինքնուրույն կազմակերպել առցանց դասընթացներ: Եվ առհասարակ, քանի որ ինտերնետը այսօր լեփ-լեցուն է ազատորեն տրամադրվող ռեսուրսներով, մեծ խնդիր չեն ցանկացողների համար այդ ռեսուրսների օգտագործումը: Կան նաև ծառայություններ, որոնք առաջարկում են տնտեսել հազարափոր դոլարներ ոչ միայն տրամադրութային, այլև բազմատեսակ այլ ընթացիկ ծախսների վրա՝ դարձնելով առցանց կրթությունն ընկերությունների համար կարևոր ենթակառուցվածք: Սա որոշակի մոտիվացիոն բնույթ է կրում նոյնիսկ այն աշխատողների համար, որոնք առանձին ժամանակ չեն տրամադրի իրենց լրացույցի կրթությանը կամ վերապատրաստմանը, մինչդեռ այսպես ենուու գնալ հարկափոր չեն: Եվ ժամանակի ընթացքում դրանք դառնում են ավելի ու ավելի հետաքրքիր: Այսպես, հաշվի առնելով, որ մարդիկ սիրում են ամեն ինչ սովորել իրենց փորձի հիման վրա, տարբեր մաս-

նագետներ ինարել են բազմարիվ նապատակադրումներով տեսագրային խաղեր, որոնց շնորհիվ ուսումն դառնում է ավելի հետաքրքիր՝ միաժամանակ վնաս չհասցնելով դրա արդյունավետությանը: Օրինակ՝ ԱՄՆ-ում այս մեթոդը լայնորեն կիրառվում է, և ինչպես նշում է The Wall Street Journal պարբերականը, ամերիկյան ընկերություններն այս կերպ կարող են խնայել տարեկան մոտ 60 մլրդ դոլար:

## ՀԱՅԿԱԿԱՆ ՎԻՐՏՈՒԱԼ ԶՈԼԵԶ

Հայաստանում առաջին և առաջմմ միակ վիրտուալ կրթօջախը Հայկական վիրտուալ բոլեզն է, որը հիմնադրվել է 2009թ. հունիսին: Այս համալսարանը ստեղծում է մի դաշտ, որի շնորհիվ ամբողջ աշխարհում ապրող հայերը, ինչու ոչ, նաև այլազգիները, հնարավորություն կունենան ծանորանալ հայոց լեզվին, մշակույթին, պատմությանը, որոնք հասանելի են վեց լեզվով: Քոյեզը շեշտադրումը կատարում է երկու հիմնական նպատակների վրա. առաջին՝ տալ հայկական կրթություն բոլոր ցանկացողներին, երկրորդ՝ ինտերների իր ուսանողներին գլոբալ համակարգին և նպաստել նրանց միջև կապերի ստեղծմանն ու ընկերական հարաբերությունների հաստատ-

Ըստ Wall Street Journal պարբերականի՝ ամերիկյան ընկերությունները, իրենց աշխատակիցներին առցանց կրթության հնարավորություն ընձեռելով, կարող են խնայել տարեկան մոտ **60** մլրդ դոլար:



մանը: Քոլեջը հիմնելու ժամանակ մեծ ուշադրություն է դարձվել այն ճիշտ հիմքի վրա ընելու հարցին, և այդ պատճառով աշխատանքների մեջ են ներգրավվել մասնագետներ, որոնք արդեն իսկ ունեին աշխատանքային մեծ փորձ: Չնայած այն բանին, որ համալսարանի ստեղծումը ի սկզբանե ուղղված է եղել այն անձանց պահանջարկի բավարարմանը, որոնք չեն կարող կրթվել երես առ երես, այսօր քոլեջն օժանդակում է նաև տեղացի ուսանողներին: Հայկական վիրտուալ քոլեջը գործում է Հայաստանի բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸ) հովանու տակ, հիմնադիր նախագահն է դոկտոր Երվանդ Չորյանը: Ինչպես նշում է դոկտոր Չորյանը, իրենց նպատակն է տալ հայեցի ուսում և հայեցի դաստիարակություն ամեն հայի, որը ցանկություն ունի հայկական կրթություն ստանալ՝ անկախ տարիքից և վայրից:

Այստեղ համակարգը գործում է

**Հայկական վիրտուալ  
քոլեջում ուսում են  
ստանում շուրջ  
35 երկիր  
ներկայացնող  
ավելի քան  
530 ուսանողներ:**

հետևյալ կերպ. ուսանողներն իրենց ուսման ընթացքում ստանում են կրթիչներ, որոնք նրանք կարող են լիարժեք կերպով փոխանցել այլ համալսարանների ուսման ծրագրերին, իսկ եթե ուսանողներն որիշ համալսարաններում չեն սովորում, ապա այս դեպքում նրանց արդյունքներն ամրագրվում են քոլեջի կողմից տրվող դիպլոմների մեջ: Ընդ որում՝ այս դիպլոմներին շարժեն վերապահությամբ վերաբերվել, քանի որ եթե նախկինում Հայաստանում չկար օրենք առցանց ուսուցման մասին, ապա այսօր այն ընդունվել է, և նշված դիպլոմներն ընդունելի են քե-

տեղական, թե՛ արտասահմանյան համալսարանների կողմից:

Հայկական վիրտուալ քոլեջը համագործակցում է Երևանի պետական համալսարանի հետ, որի կողմից դասընթացները հաստատվում են որպես ակադեմիական մակարդակի դասընթացներ, և միայն դրանից հետո են բոլոր պարագաները գործածության մեջ դնել: Համալսարանի ուսանողների ընդհանուր թիվն արդեն իսկ հասնում է 530-ի (շուրջ 35 երկիր): Նրանց ճնշող մեծամասնությունը Հայաստանից չէ: Ամենաշատը ԱՄՆ-ից ժամանած ուսանողներն են, որոնք ձևավորում են ընդհանուր ուսանողների 33%-ը: Երկրորդ տեղում է Ֆրանսիան, երրորդում Ռուսաստանը, իսկ Հայաստանը միայն հինգերորդ տեղում է: Ուսանողները իմնականում 20-30 տարեկան են, ամենատարեց ուսանողը 81 տարեկան է: Սովորաբար ուսանողները հետապնդում են երկու հիմնական նպատակ՝ առաջին՝ ստանալ կրթիչներ (ուսանողների 2/3 մասը), երկրորդ՝ պարզապես լինել ունկնդիր (ուսանողների 1/3 մասը): Հայկական վիրտուալ քոլեջի պատասխանատությունը հավաստիացնում են, որ կրթօջախը չի հետապնդում նյութական շահեր, իսկ ուսման վարձը, որը, ի դեպքում 199 դոլար է, ընդհամենք միջոց է, որ ուսանողներն ավելի լրցորեն մոտենան իրենց ուսմանը: Անդամ ուսանողները տարբերվում են ոչ անդամ ուսանողներից միայն նրանվ, որ մասնակցում են ՀԲԸ-ի կրթական, մշակութային, երիտասարդական, բարեգործական աշխատանքներին և ստանում են 35% գեղչ: Ուսանողների վարձերից ձևավորվում է քոլեջի եկամուտների միայն 5%-ը, իսկ մնացած 95%-ը բաժին է ընկերությանը: **BC**

Լիդիա Չերքեզյան